

Հ-63

ՀՀ ԳԵՍՈՒՔՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԴԱՅԻՆ ԸՆԱՂԵՄԻԱ  
Մ. ԱԹԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՌՈՒԹՅԱՆ ԲՆԱՏՏՈՒՏ

ԿՈԶՄՈՑԱՆ ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՉՈՐՅ

ՀԱՅ ԵՎ ՊԱՐՄԻՑ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ

ՀԱՄԵՄՄԱՏԱԿԱՆ ՊՈԵՏԻՆԱԼՆ

(10-16 ՊԲ.)

Ժ.01.01 Հոյ դասական գրականություն

մասնագիտություն

Բանասիրական գիտությունների դոկտորի  
գիտական աստիճանի հայցման առենախոսության  
Սեպտեմբեր

ԱՏԽԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈԽԹԱԳԻՐԸ

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում՝

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանափրական գիտությունների դոկտոր.

պրոֆեսոր Ա. Ա. Ղազինյան

բանափրական գիտությունների դոկտոր.

պրոֆեսոր Գ. Ա. Առաջրյան

բանափրական գիտությունների դոկտոր.

պրոֆեսոր Ա. Գ. Մարոյան

Առաջատար կազմակերպություն - Երևանի Խ. Արքվանի անվան պետական

մանկավարժական ինստիտուտ

Պաշտոնական կայանալու է 1996 թվականի 20-ին:

Ժամը 12, ՀՀ ԳԱԱ Մ. Արքվանի անվան գրականության ինստիտուտում՝  
գործող 003 մասնագիտական խորհրդի նիստում:  
Հասցեն՝ Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 15:

Առենախոսությամբ կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Արքվանի անվան  
գրականության ինստիտուտի գրադարանում:

Առենախոսությամբ առարված է 1996 թվականի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտության բարձրագործությանը՝

բանափրական գիտությունների բնկանում՝

Ա. Ղազինյան

Անմիտ Վարդամյան

ՈՒԽՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Գրականագետների, և առաջին միջնադարակետների առջև զրված խնդիրների շրջանակում այսօք մեծ տեղ է հատկացվում զասականների ժառանգության ուսումնասիրությանը, նրանց զերի գնահատմանը ազգային մշակությի զարգացման պատմության մեջ: Ինչ խոսք, ամեն մի ազգային գրականության առանձնահատկություն առավել ցայտուն է զրսմորդում, եթե այն ուսումնասիրվում է իր զարգացման ընթացքի մեջ, այլ ժողովուրդների գրականությունների հետ ունեցած ընդհանրությունների և տարբերությունների, գրական առնչությունների և փոխազդեցությունների համապատկերում:

Հայ ժողովրդի նակատագիրը սերտորեն կապված է եղել հարևան պարսկաց ժողովրդի՝ հետ, և այդ երկու աշխարհները, իրենց պատմաքաղաքական և էթնիկ-մշակութային առանձնահատկություններով հանդերձ, զարերով գոյատել են կողդ-կողդի, ապահովով մերձեցումների և օապրումների անհամար շրջաններ: Ամեն մի մերձեցում, անշուշտ, իր հետ ընթել է առնչությունների հոսք և որպես, ուստի զյուրին չէ ուսումնասիրել և ծշտել նրանցում կոնկրետ ազգեցությունների աստիճանը և չափը: Պարզ է մի հանգամանք, որ հազուան շրջանին առավել բնորոշ են եղել ծագումնաբանական կապերը: Քրիստոնեության ընդունումը հայերին անքակտելիորեն կապել է բյուզանդական-արևելյան աշխարհին և հեռացրել կից՝ պարսից ժողովրդից: Սասանյանների անկօւմից և հսլամի ընդունումից հետո հայ-իրանական հարաբերությունները մտնում են մի նոր փուլը. Երկու հզոր զաղավարախոսական պատնշներով անշտաված ժողովուրդների մշակութային կապերը զբեթե խրզվում են, վերահսկվում հակոտներ հոգևորականության կողմից: Մեզանում ձևավորվող և քաղաքական և գեղագիտական գիտակցությանը խորթ էր իսլամական աշխարհն իր բոլոր արտահայտություններով: Ինչպես զրադաշտական, աշնդես էլ հետազայում մահմեզական աշխարհն ընդունելի չի եղել և չի մտնել հայոց քրիստոնեական էթնոմշակութային հետաքրքրությունների ուրություն: Կամ, եթե անգամ արծարծվել է, ապա զերազանցապես հակամառության տեսքով: Այդ է պատճառը, որ հայ մատենագրության մեջ նշված շրջանում իրանական մշակութային աշխարհի արտացոլումը շատ զուսպ է: Նույնիսկ հոգեւոր ինստիտուտի թուլացումից հետո, զայաստանում աշխարհիկ մոքի վերեւթի շրջանում, մեր մատենագիրները վերապահուեն էին վերաբերվում պարսից արվեստին և ըստ կաթոլիկուն խոչընդոտում նրա մուտքը հայոց աշխարհ: Սասամթ այս պարագայով պետք է բացարեն 10-րդ դարում մեր պոե-

զիամի անկախությունը պարսկական աշխարհիկ գրականությունից, որը համեմատության խորքի վրա առավել ցայտուն է դառնում:

Սույն տաենախոսության թանարկման նյութը հայոց և պարսից միջնադարյան պոեզիայի համեմատական պոետիկան է: Եվ բանի որ մեկ աշխատության աշխատանքում հնարավոր չէ անդադառնալ թանարերգության ըոլոր տեսակներին, ապա մենք խնդիր ունենք ուսումնասիրել միջնադարի սոցիալ-պատմական զարգացման օրինաչափությունների համակարգում զարգացող երկու գրականությունների սիրային թանարերգության /աշխարհիկ և հոգեոր/ կայացման ու զարգացման որոշ առանձնահատկություններ, զիտելով այդ շրջանը ոչ միայն որպես թաղաքական պատմության ժամանակահատված՝ այլ նաև, որպես մշակութային ֆենոմեն, նրանում տիպաքանորեն ընդհանուր միջնադարյան մարդու աշխարհներկալմամբ, զարդարախոսությամբ, աստվածապետական-զասապային մտածողությամբ, իրականության ընկալման և արտացուման յուրահատկությամբ, գեղեցիկի չափանիշներով ևն:

Հայոց և պարսից մշակութային աշխարհում նորորակ գրականության և նրա ժանրագին ձևերի համակարգի ձևավորման ակունքների մոտ կանգնած են նարեկացին և Ռուզաքին, որոնց պոեզիաները վաղուց չափանիշի ուժ են ծեռք բերել, ուստի նրանց պոեզիան մեր աշխատանքում զիտվում է որպես ելակետացին և ներկայացվում համեմատությունների ըոլոր մակարդակներում: Հանձին նրանց՝ մեր ըննարկման նյութ հանդիսացող հայոց և պարսից միջնադարյան սիրային թանարերգությունները իրենց տարատեսակներով ժամանակաքական տեսակետից անհամեմատելի են, քանի որ իրենց ձևավորման հենց ակունքներում զարգանում էին իրարամերժ ուղղություններով՝ աշխարհիկ և հոգեոր: Եթե նարեկացին կերպում էր իր „աստվածային սիրո հիմքը“, , Ռուզաքին կոչում էր աշխարհիկ կյանքի, սակայն եթե խորանք դրանց արմատների մեջ, ապա պարզ կղանա, որ երկուսն էլ որոշ առումով , , քաղաքականացնում, , էին գրականությունը, ծառացեցնելով այն սիրոներին:

Քրիստոնեության և հուլիսի ընդունումից հետո ձևավորված հայոց և պարսից պոեզիաները նոր գաղաքարախոսությունների շրջանակում, այնուհանգերծ, հետահաւաց ինչ-որ՝ չափով կրում էին սեփական ժողովուրդների գեղագիտական չափանիշների, գիտաշակութային և կրոնա-փիլիսոփայական ժառանգության կնիքը, հետևաքար քազմաթիվ եզրերով նորից ու նորից մերձենում և քածանվում էին: Այդ է պատճառը, որ ոչ միայն ընդհանրություններն են զառնում մեր ուսումնասիրության առարկան, այլ նաև տարբերությունները, որոնք առնչությունների և փոխազդեցությունների թարդ համակարգում մեր առջև բաց են անում նորանոր շերտեր: Պարզում է, որ օտարումը իրարից 10-րդ դ. եղել է երկու ստեղ: Ինչպես մեր միջնադար-

յան ծեռագրերում էին առկա հատուկենա թարգմանություններ ու հիշատակություններ, այնպես էլ 10-11-րդ դ. պարսկական պոեզիացման մեջ հասած նմուշներում, ամենահայտնի արքունական թանաստեծների զիվաներում /Ռուզաքի, Օսուրի, Ֆառուրի, Սանտ չեհրի, Ասչազի ևն/ պահպանված հազարավոր բեկթերի մեջ ընդամենը մեկ-երկու անգույն հիշատակություն կա հայոց մասին, զերազանցապես արված հանգի պահպանության համար: Այդ տեսակետից բացառություն կազմող Փիրզուսու , , Շահնամենում, , հայերին նվիրված հատվածը բովանդակության թելադրանքով ոչ միայն պատմական ժամանակախոտում է պարունակություն, այլ նաև ընդգծված մեծապետական երանգ ունի:

Հայոց մասին հիշատակությունները առավել գիտակցված են ավելի ուշ՝ նադանիի, նիզամիի և այլոց պոեզիաներում, որոնք գնահատական են արտահայտում: Դա այս շրջանի սկզբանի էր, եթե աշխարհականցող հայոց պոեզիայում պարսկականի հետ ամրիշական չփումների և յուրացումների բազմաթիվ փաստեր են առկա, թանի որ իրանական արվեստի աշխարհիկ ոգին այնուհանդերձ չէր կարող իր ազգեցությունը չունենալ. այն Անդրկովկասում ձևավորում էր նաև վրացական աշխարհիկ պոեզիան: Հետևաքար, անհիմն չէ միջնադարյան հայ տաղասացների պատկերների և կերպարների կաղապարում աշխարհիկ ոգու անդրազարձների որոնումը: Աշխարհականցող հայոց պոեզիացի առաջին ներկայացուցիչները իրենց գործերը երկակի մեկնաբանելու հարացվորություն էին տալիս: Նրանք արտահայտում էին միջնադարյան հարատև զիլեման՝ հոգի, թե՝ մարմին:

Կոստանդին Երգնակացու, Հովհաննես Թլկուրանցու և Գրիգորիս Աղթամարցու զրական ժամանակական վերլուծությունը պարզ է՝ զարծնում, մի կողմից, նրանց կապը զրական ավանդությունների հետ, մյուս կողմից՝ պարսկական աշխարհիկ պոեզիային մեր տաղասացների քաջատեղյակությունը: Ի հայտ են գալիս ընդհանուր տիպաքանական զծեր, յուրահատուկ նաև ելվրոպական միջնադարյան գրականություններին. ղըանք են՝ բնմաների և մոտիվների, նկարագրման իրեալականացման մեթոդի, ընտրյալ զեղարվեստական արտահայտչամիջոցների, կերպարների ձևավորման կանոնարկված ձևերի, կաղապարված պատկերների ընդհանրություն, ինչպես նաև՝ պարսկական պոեզիայի՝ հայոց վրա ունեցած որոշ ուղղակի ազգին թյութեալունքի թիւն ընվորմ է ոչ թե որպես սովորական յուրացում, այլ որպես , , փոխազդեցության թարծը ձև՝ սինթեզ,, , որը սակայն չի մերժում մեր պոեզիայի յուրահատկությունը:

12-13-րդ դարերում առավել ակտիվ հարացերություններ են սկսվում ոչ միայն հայոց և պարսից, այլ ամբողջ արևելյան աշխարհի ժողովուրդ-

Ների միջև, որոնց փոխազգեցությունները էական են զառնում։ Պարսկական մշակութիւնի գերակայությունը Մերձավոր և Միջին արևելքում առկա էր նույնիսկ հրանի բաղաքական իշխանության բացակայության պարագայում և մեզ հայտնի պատճառներով թյութեական ցեղերի միջնորդությամբ էր մուտք գործում վերջիններիս կողմից նվաճված երկրներ։ Այդ է պատճառը, որ սելջուկան շըշանի արվեստի հուշարձանները կրում են քրիստոնեա-մերական միասնականության կնիք։ Հայերը ևս բազում թելերով կապված էին Արևելքի հայ՝ առևտրա-տնտեսական, հոգեբանական կապերով, քաղաքներում ունեցած էթնիկական բազմազանությամբ, ինչը խթանում էր այդ աշխույժ փոխարքերությունը։ Սոցիալ-պատմական տեղաշարժերը, քաղաքների և արհեստների բուռն զարգացումը իրենց հետ պոեզիա են քերում քաղաքացու, արհեստավորի և առևտրականի հետաքրքրությունները, պոեզիայի ստեղծման զարգացություններից ու առևտրականի համբաւ առաջնա-ներն ու պարսից քաղաքական պոեզիայի փոքր ժամանակին ձևերն են ցույց տալիս, ծեսվորվում ու զարգանում են նմանօրինակ, սակայն անկախ։ Ընդհանրությունը արգայունը է Ֆեոդալական հասարակազում ապրող երկու ժողովուրդների պատմական զարգացման նույնաման օրինաչափությունների, իսկ տարբերությունները՝ զարդարական ինստիտուտների գոյության, էթնիկ ժառանգության յուրահատկության և այլ առանձնահատկությունների։

Մեր նախորդների և ժամանակակիցների՝ Տր. Անառանի, Մ. Աբեղյանի, Ն. Սարի, Կ. Սելիբ-Օհանջանյանի, Հ. Թիրաբարյանի, Բ. Խաչաթյանցի, Մ. Հասրաթյանի, Ա. Շահսուլվարյանի, Բ. Զուգասարյանի, Հ. Սովոսյանի, տաջիկ հետազոտող Ա. Դավիդոնվի և այլոց կոահումներն ու լուսաբանումները, ինչպես նաև հայոց ու պարսից քանաստեղծական ժառանգության ըննական տեքստերն ու վերլուծությունները, որոնք լայնորեն հրապարակված են առենախոտւթյան մեջ, իրենց գերն են կատարել մեր կողմից հայ-իրանական կապերի տեսակների բացահայտման, զբանական համակարգման գործում։

ՄՊԱՏԱԿ ՈՒ ԽՄԻՒՐՆԵՐԸ. Առենախոտության հիմքում ընկած է համեմատական մեթոդը, որը ի՞նչայտ է բերում հայ-իրանական զբական առնչությունների տարքեր՝ ծևերը՝ ծագումնաբանական, պատմա-տիպաբանական, ինչպես նաև փոխազգեցությունների համակարգում ծևավորվող սինթեզը և ուղղակի հանդիպումները։ Այդ մեթոդով կատարված քննությունը առավել հասկանալի է զարգում հայոց պոեզիայի զարգացման բազմաթիվ խորագիր երեկություններ, հարավություններ է տալիս համեմատության լույսի տակ տեսնել մեր միջնադարյան զասականների զբական ժառանգության մեջ ավանդականություն ու նորարարությունը, ժամանակի ծևերի կապը նրանց սոցիալական գործումների ու առաջանական առաջանական ժամանակաշրջաններում շփումների ու լուրացի աստիճանը՝ բարեկարգությունների համակարգում նրա զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները և ս:

Տիպաբանական համազրման և հակառակ ուղղությունները, նրա տեղը միջնադարյան գրականությունների համակարգում։ Մեր խնդիրն է քացահայտել սիրային քնարերգությանը հատուկ ավանդականությունը, կանոնաբակավագությունը, կաղապարված մողել ների առկայությունը, մոտիվների սահմանականությունը, անհատականության զրմությունը և առաջարկական կողմից մշակութային երևությունը։ Գործառության մեջ զնել հայոց և պարսից միջզգական ընդհանրությունների և առանձնահատկությունների որակման մեր կողմից առաջարդիված տերմինը։

Գործառության մեջ զնել հայոց և պարսից միջզգական ընդհանրությունների և առանձնահատկությունների որակման մեր կողմից առաջարդիված տերմինաբանությունը։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՂՄՔԸ. Առենախոտության հիմքում ընկած է համեմատական մեթոդը, որը ի՞նչայտ է բերում հայ-իրանական զբական առնչությունների տարքեր՝ ծևերը՝ ծագումնաբանական, պատմա-տիպաբանական, ինչպես նաև փոխազգեցությունների համակարգում ծևավորվող սինթեզը և ուղղակի հանդիպումները։ Այդ մեթոդով կատարված քննությունը առավել հասկանալի է զարգում հայոց պոեզիայի զարգացման բազմաթիվ խորագիր երեկություններ, հարավություններ է տալիս համեմատության լույսի տակ տեսնել մեր միջնադարյան զասականների զբական ժառանգության մեջ ավանդականություն ու նորարարությունը, ժամանակի ծևերի կապը նրանց սոցիալական գործումների ու առաջանական առաջանական ժամանակաշրջաններում շփումների ու լուրացանդարբիստուններին, արևելահիմամականը, միջնադարյան զրմությունների համակարգում նրա զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները և ս:

Տիպաբանական համազրման և հակառակ հակառական մեթոդով հատկապես ի հայոց գալիս սիրային և կրոնափի լիսովայական քնարերգության պոտաֆիկայի յուրահատկությունները ու ընդհանրությունները թեմաների, մոտիվների, կերպարների, պատկերների, լեզվածական, երեխմն էլ՝ կոմպոզիցիայի մակրակներում։ Այս օգնում է գիտականորեն տարբերակել մշակութային-ուղղիուալ հաղորդակցության արդյունք հանդիսացող պունչություններից քնարեկան պատմական օրինաչափություններից թափառական համակարգում նույնատիպ սոցիալ պատմական ժամանակություններից գլուխ տիպաբանական ընդհանրությունից։ Հայոց և պարսից զասականների զբական ժառանգության համեմատական պոտաֆիկան իրականացվում է պատմականության զիրօնուշումից, որը առավել հստակեցնում է հայոց պոեզիայի տեղը երկու հզորք քյուզանդական և պարսկական գրականությունների կողմին գիտական առողջականությունների կողմին գրականությունների կողմին գրականության առումով այս նույնպես վկայում է առենախոտության արդիականության մասին։

Թեմայի հետազոտությունը պահանջում է և պարսից, և հայոց փաստական նշութի տիրապետում, այդ պատճառով վերլուծությունը իրականացվում է ոչ միայն ժամանակակից կոմպլեքսային գիտաքննական մեթոդով, այլ նաև հայրենական հայագիտության և իրանագիտության տեքստաբանական նվաճումների յուրացմամբ:

ԱՏԵՆԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ. Բացի ինքնին հարցադրումից, նորության կարելի է համարել նաև իրանական գրական կապերի գիտական համակարգումը, օրիստոնեական և խւլամական միստիցիզմի գեղարվեստական դրսորման /նարեկացի-Սանայի, Նարեկացի-Ռումի/ քացանա գտումը, ընդհանրությունների հիմքում ընկած ծագումաբանականի տարրորդումը, միջնադարյան հայոց տաղասացների պոեզիայում „սինթեզի“, երկութիւնիմավորումը, ինչպես նաև՝ հանձին հայրենների և պարսից քաղաքացին պոեզիայի նմուշների /քառակ, հազար/, այդ գրականություններում սոցիալական դիֆերենցիացիայի երևութիւնի արձանագրումը ևս:

Ատենախոսությանը նախորդող հրատարակություններով մեր կողմից շրջանառության մեջ է զրկել նոր և ընդարձակ նյութ՝ պարսից պոեզիայի նմուշների թարգմանություններ, որը ի ցուց է զնում հայ և պարսիկ ժողովրդի եսթերիկական գիտակցության ընդհանրություններն ու տարբերությունները:

ԱՏԵՆԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՍՎԱՆ ԱՐԺԵՔԱԿՈՐՈՒՄԸ. Սույն աշխատանքը քննարկել է ՀՀ ԳԱԱ Արևելաչությունական ինստիտուտի Քրիտոնյա Արևելքի, ինչպես նաև՝ Մ.Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի Միջնադարյան գրականության բաժիններում և պաշտպանությունը կազմակերպող գիտական խորհրդում։ Ատենախոսության բազմթիվ հատվածներ հրապարակվել են գիտական հոդվածների և գրքերի ձևով։ Հեղինակը բազմիցս իր թեզերը և զբությունները լուսաբանել է արևելագիտական և հայագիտական խնդիրներին նըւիրված միջազգային, միութենական /նախկին ՍՍՀՄ/ և տեղական գիտաժողովներում։ Մոսկվա 1973, 1974, 1985 թթ., Դուշանե 1973 թ., Ս.Պետրով 1987 թ., Թոստով Վելիկի 1980, Բարու 1980, Երևան 1977, 1981, 1986, 1989, 1995, 1996 թթ.։

Մեր կողմից հրատարակած և ատենախոսության մեջ պրտացուում գտած գրքերը գրախոսվել են գիտական հանդեսներում և մամուլում։ "Народы Азии и Африки", Москва, 1982, 3, "Садои Шарк", Душанбе, 1982, 3, „Հայաստան, , , 1991, Երևան, հմր 5:

ԱՏԵՆԱՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԻՄԱԿԱՆ ԲԱՎԱՆԴՎԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, պարսկերեն տողացի թարգմանությունների ընագիր տեքստից և գրականության ցանկից։ Գլուխները կազմված են ենթաքամի ններից։ Առաջաբանում հիմնավորված է թեմայի ընտրությունը, նրա գիտական արդիականությունը, պարզաբանված է ընարկվող նյութի նկատմամբ, խնդիրները, մեթոդը և ուսումնասիրվածության աստիճանը։

Առաջին գլուխը՝ „ԵՐԱԿԻ ՊՐԵԶԴԻՄ – ՆՐԱՅԻ ՀԱՎԱՏԱՄՔ, , , ԱՓիրված է հայոց և պարսից պատասխական միջնավարում տեղծագործող նրկումներությունների՝ Ռուզանգիր և Նարեկացու կյանքի և գործի ընդհանրություններին, Նրանց նակատագրերը մերժեցնող սոցիալ-պատմական իրազարծությունների և օրինաչափությունների վերլուծությանը։ Արաբների նվաճումից երկու-երեք դար հետո դանական և հետևողական խարխլվում էին Սրական խալիֆաթի հիմքերը, և բազմաթիվ պատասխական տներ անկախություն էին ձեռք բերում։ Այդ շրջանում Հայաստանում մեսպորվել էին Բագրատունիների և Արծրունիների, Սրբին Ասիայում և հրանում Մաֆարյանների և Սամանյանների թագավորությունները։ Զարգացող քաղաքները՝ Անին, Դմին, Սամարդանն ու Բուխարան, դառնում էին Սերծափոր և Սրբին արեւի տարանցիկ առևտիքի խոշորագույն կենտրոններ։ Պարսկաստանը, որ Սասանյան վերջին շահի՝ Հազկերտ Յ-րդի սպանությամբ ավարտել էր իր պետականության փառագործ ծանապահնը, ապա կորցրել էր Զարդաշտական կրոնը, ընդունել հսլամը, կորցրել էր փառավական գիրը՝ ընդունել արաբականը, կորցրել էր պետական Լեզուն և հետևաբար՝ կապը գրական-մշակութային պանդությունների հետ, 10-րդ դարում որոնումների մեջ էր։ Նա վերագրում էր խոսակցական ֆարսին, յուրացնում արաբական պոեզիայի ժանրագիրն ծները և արուզ կոչվող քանակական տաղաշափությունը, ինչպես նաև կյանքի կոչում հինը, ավանդականը։

Հայոց պոեզիան, որ արդեն ապրել էր նմանօրինակ ցնցումներ և այժմ իր գարգացման ընականությունով էր Երևանում և անվերապահորեն հոգեոր էր, այդ շրջանում երկվեղկվում է, մի կողմից այն ուղղակիորեն շարունակում է հին գրական պահությունները՝ եկեղեցական հիմների և շարականների հունով, մյուս կողմից՝ զնում զեփի աշխարհականությունը վերջինիս հատուկ գաղափարական և ժանրագիրն բազմազանության միտումներով։ Հայաստանում ազգային պետականության երկարատև բացակայությունը, ընականաբար հանգեցրել էր եկեղեցու գերիշխանությանը մշակությի վրա։ Այս

պարագան էսպես կաշկանդում էր աշխարհիկ ոգու զբսերումները: Դրան հակառակ, իրանում և Միջին Ասիայում, Բուլսարացի և Սամարղանդի սուլթանական ավարանքներում և պատաժիքական տներում զարգանում էր աշխարհիկ պոեզիան: Խրախտավում էր ներքողը, գովեք, պատերազմների և խրախանքների նվարագրությունը: Գրականության վրա սոցիալական ինստիտուտների կողմից պարագան էսպես կաշտությունը հանգեցրեց այն քանին, որ հայ գրականությունը հայտնի ուշացումով մտավ զուտ աշխարհիկ գրականության ոլորտը, իսկ պարագան պոեզիան գերես երկար ժամանակ գտնվում էր միօրինակ ներքողագրության, թեմաների կրկնության և մանվածապատ ոմի ու սալոնային հաճուքըներին բնորոշ բովանդակության շրջանակում: Հնի և նորի, աշխարհիկ և հոգևորի այդ բարդ խաչմերուկում էր գտնվում նարեկացու և Ռուզարիի պոեզիան, որոնց վիթակվել էր նոր էջ բացել սեփական ժողովրդի մշակություն, բայս էր վիթակվել նոր գրականության և նոր խոսքի ձեւադրման պատմական առաքելությունը:

Նրանք ներկայացնում էին Արևելյան աշխարհի տարբեր տարածաշրջաններ, տարբեր զաղավարախոսություններ, էթնոսներ, առեղծագործում էին տարբեր ժանրային համակարգերում: Մեկը ազգարարում էր երկնային սեր՝ մտածելով լորդանիշերով, մյուսը՝ աշխարհիկ սերը՝ մտածելով կենդանի պատկերներով, մեկը ներքողում էր Աստծուն, մաղկելով իրեն, մյուսը՝ ներքողում էր սիրուհուն և մեկենասին, մեծարելով իրեն /ֆախր/: Բոլոր պահանջատկություններով հանդերձ /որոնք կարևոր ենք համարում մեր միջնաղարյան զրականության տեղը և դերը համաշխարհային գրականության ուղղում Ծիշտ Զանաշելու համար, քանի որ համեմատական զրականության առարկան ոչ միայն ընդհանրություններն են, այլ նաև՝ տարբերությունները, մենք ականատես ենք լինում նրանց կյանքն ու զորքը մերծեցնող բազմաթիվ սոցիալ-պատմական և համամշակային-գեղագիտական տիպաքանության:

Այսեւելյան աշխարհում ստեղծագործող այդ երկու մեծությունները ջատագովն էին երկու զգոր սոցիալ-կարգավիրող ինստիտուտների՝ արքունիքի և Ակնհեցու: Նրանք արտոնայալ խավի ներկայացուցիչներ էին, որտեղից և ծագում էր նրանց պոեզիայում տիպաքանական բազմաթիվ ընդհանրություններ, չնայած նրանց հակաղիք՝ զաղավարների և հավատամթի: Օրինակ՝ քանաստեղծի յուրահատուկ կարգավիմակը, զրանից բխող նրանց պոեզիայի էլիտար ընությը, քանաստեղծի և լսարանի հարաբերությունը՝ աշտեղից՝ ստեղծագործության որոշակի ներփակվածությունը, ծողովրդական ոգու հետ անմիջական կապի թուլացումը /լեզուն/, կանոնարկված մոտիվներն ու թեմաները, իդեալականացման կայուն մեթոդը, սիրացին քարերգությունում անհա-

տական զգացմունքայնությունից զուրկ և կաղապարված սխեմաները, պանդապահ ժանրացին մենքը ևս: Սրանք արդեն տեսականորեն հաստատված և միջնաղարյան գրականություններին յուրահատուկ նորմատիվությունից ընդունություն են: Նարեկացին և Ռուզաքին՝

1. Կանգ նած են նոր գրականությունների առեղծման ակունքների մոտ:
2. Ներկայացնում են երկու էլիտար գրականություն:
3. Նրանց պոեզիան չափանիշ էր և կողմնորոշող այդ գրականությունների հետագա ողջ ուղին:

4. Նրանք ամբաստանվել են սոցիալական հավասարություն քարոզող աղանձավորական թոնղրակյան և դարմաթյան շարժումներին համակրելու համար, ընդ որում այն ինստիտուտների կողմից, որոնց ծառայում էին:

5. Նրանք ազգարարում էին բարին, հումանիստականը և գեղեցիկը:

Ռուզաքին և նարեկացու պոեզիաները ֆունդցիոնալ են, քանի որ սեփական կարգավիճակը պայմանավորում էր նրանց կենսափիլստիայությունը, զեղագիտական չափանիշները, զեղարվեստական խոսքի նկատմամբ ունեցած մոտեցումը, նկարազրման մեթոդը ևս: Նրանք գովերգում էին մեկը՝ աստծուն, մյուսը՝ սիրուհուն: Երկու դեպքում էլ հարկավոր էր, հանդիպակոր պերճախոսություններում էլ ակնհայտ է գովերգվողի կերպարի ծեսվորման հատկանիշներից մեկը՝ նրա արտաքին բարեմասնությունների իդեալականացումն ու ընդգծումը: Եթե պայմանականորեն անտեսենք նարեկացու տալերի միստիկական ոգին, պապ ընդհանուր զենքով կստանած սիրու օքանելտի ներդողման նույնատիպ կաղապարված սխեման, որտեղ պարսիկ քանաստեղծի համեմատվող առարկաներն են զեմքը, շուրջը, վարսերը, այտերը, ատամները, հոնքը ևն, հայ քանաստեղծինը՝ աշքերը, բերանը, շուրջերը, լեզուն ևս: Երկու գրականություններում էլ գովերգվում է կուրոքը, իրանը, հայ պոեզիայում՝ ծոցը: Մատների զովը հանգում է աստվածաշնչարին, լուսապայծառ մատունք, ինչ իսկ պարսիկ պոեզիայում այն հանդես է զալիս իր եթոնզրաֆիկ մեռվածքը՝ հինայած:

Ակնհայտ է երկու բանատեղծների պատկերավոր մտածողության և նկարազրման մեթոդի ընդհանրությունը: Ծիշտ է, ոչ ոք իր մտապատկերում չի վերականցնում համեմատվող առարկավի և համեմատության իրական նմանությունը, այսուհանզերձ, համեմատությունները ժամանակի ընթացքում զառնում են մշտական, ծեռք են բերում կայուն խորհրդանիշի ուժ /ծով-աշք, վարդ-շուրջ, հասմիկ-այտ ևս/: Եթեկու բանատեղծների արվեստում էլ հանկապես ընդգծված է ծգտումը զեպի լոււսը, միստիկ նարեկացին՝ զեպի հոգուը, Ռուզաքին՝ զեպի նյութական:

Ահա այն խաշմերուկը, որտեղ կը կին հանդիպում ու հատվում են Ռուղաքիի և Նարեկացու հավատամքները: Երկու հեղինակների համար էլ լույսը խորհրդանշում է գեղեցկություն և բարիք: Սա երկու բանաստեղծներին մերժեցնող համամարդկային տիպաբանության արդյունք է: Այստեղից էլ ըլում է գովերգվողի հատկանիշներից մեզը՝ նրա լուսափուռ զեմքը: Այն արտացոլում է ատելիք, մոլորակների փայլն ու պայծառությունը և զրանց հետ զուգորդվող բոլոր նրբերանգները: Հետազայում այդ անշարժ, զեկորատիվ իշեալականացման մեթոդը դեռ երկար ուղեկցում է հայ և պարսից միջնադարյան տաղերգությանը Կոստանդն Երգնական և Հովհաննես Թէկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու, Օնարիի, Մանուչեհիրի, Ֆարրունի, Անվարի և այլոց բանաստեղծություններում: Ներբողակրի /սիրելիի կամ Աստվածնի/ կերպարը մեավորվում է մի քանի հիմնական գգայական հատկանիշների վրա. նա կրողն է գույնի, փայլի, լուսի, հոտի, ծեփ, համի:

Բոլոր միջնադարյան գրականություններին հատկապես Յնորոշ է անդրադարձ դեպի Սուրբ գրքերի թեմաները, Կերպարները, պատկերները, որոնք ընթերցողից պահանջում են կրոնի և առավելների որոշակի գիտելիքներ: Ռուղաքիի և Նարեկացու գեղագիտական խնդիրներն ու վերջնական նըպատակները պոեզիայում սկզբունքորեն տարբեր են: Ռուղաքիի բանաստեղծություններում, սուրբգրական,, մեջբերումները ծառացում են աշխարհիկ սիրո հաստատմանը, սեփական կենսափիլիսոփայության ընդգծմանը: Դեռ ապելին, նրան է պատկերում պարսկական պոեզիայում հետազայում կանոնի վերածված պայմանականությունը՝ կրոնը սիրունուն ստորագասելու գաղափարը: Խեկ Նարեկացու պոետիկայի աղբյուրը Աստվածաշունչն է: Նարեկացու պոետիան ծառացում է Աստծոն և նրա միջոցով միայն գեղեցիկին ու թարուն հաղորդակցվելու գաղափարին: Ռուղաքին ժխտում է ամենայն բարիք պուանց սիրո օքտեկտի, մինչեւ Նարեկացին հաստատում է ամենայն բարիք՝ սիրով: Երկու հեղինակների համար էլ Սերը վեր և ազնիվ զգացմունք է: Նարեկացու պոեզիայի գեղագիտական հիմքը ամբողջապես կրոնական զգացմունքի այլաբանությունն է:

### Նարեկացի

Ոչ երեւեալ երբէք,

Նւ ոչ տեսականութիւն առանց քո ծագման լուսաւոր...<sup>1</sup>

### Ռուղաքի

Առանց քո դեմքի թող լուսընկայի լուսաը չլինի,

Առանց քո գույի թող արեգակի հուը չլինի<sup>2</sup>:

<sup>1</sup> Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ.Ա. Խարբանչի, Ա.Ա. Ղազինյանի, Նուսան, 1985, բան իգ ա:

<sup>2</sup> Ռուղաքի, Ասար-է բաղիմանզե-յե Աբու Աբդալլահ Զաֆար էքն Մոհա-

Երկու դեպքում ել թովանդակությունը միանշանակ է. , ,Առանց սիրո կանթ չկա, : Այսուհանդեր և Ռուղաքի և Նարեկացու համար սերը անհասանելի է: Եթե Նարեկացու մոտ վերջինիս արմատները զնում են զեպի թրիտոննեական միստիցիզմը, ապա Ռուղաքի մոտ այն համարվում է արաբական հազարի /ուզրայան/ ուղղությունից մնացած օրինաչափություն, եթե սերն անհասանելի՝ իսկ սիրուհին անմատչելի է: Բացառված չեն առաջարկանական ըմբռնման հետ ունեցած աղերսները:

Երկու հեղինակներն ել իրենց հավատամքը հաստառաւմ են Ծարական հերոսի միջոցով: Այստեղ արգեն կարելի է խսել Ծարական հերոսի և հեղինակային , , նս-ի, , նուշնության մասին, հատկապես այն հատվածներում՝ որոնք ինքնակենսագրական նրբերանգ են կրում: Մարդկային հոգեբանության խորաթափանց Ավարագրությունը, նրա բարդ ու հակասական է ության պատկերման առաջնայությունը միջնադարյան գրականության համար ոչ բնորոշ երեւությունը էին, և այդ է պատմառը, որ նրանց պոեմիան բազմաթիվ հետազոտողների կողմից երբեմն գնահատվում է որպես Վերածննդյան: Մենք հակած չենք ընդունելու այդ եզրակացությունը, սակայն անառարկելի է այն փաստը, որ այդ բանաստեղծներին Յնորոշ են Վերածննդյին հատուկ զծեր, օանի որ համարները ժամանակավեպ են և կարող են կանփատեսել ժամանակը և ազդարաել պապան: Այդ ամենով հանգերծ, նրանք իրենց ժամանակի և միջավայրի ծնունդ էին և գտնվում էին հասարին-աստվածապետական կապանքներում: Նրանց ստեղծագործությունը ուներ հստակ սոցիալական կողմնորոշում:

Ինչ վերաբերում է նրանց լեզվին և ոմին, պատ միջնադարյան պարսից պատեհկայի գիտակների կողմից Ռուղաքիին վերագրվող, , հանճարեղ պարզություն, , որակումը վերագրում ենք նաև Նարեկացուն, , հանճարեղ ըարդություն, , տարբերակով: Նարեկացուն հատուկ հուերության ոմը, հատկապես խացման, ինչպես նաև հակաթեզերի ծմբ պարսից պոեզիային նուշնակես ընորոշ է: Կարծում ենք, ծմբումը զեպի հակաթեզը ունի զուտ տիպարանական բնություն: Պարսից մեջ վերջինիս արմատները կարելի է որոնել մազդայականության բինար մտածողության մեջ, հայոց մեջ՝ թրիտոննեական զելագիտական մտքում /Ավգուստիանոս/: Նվ վերջապես այն կարող է նաև համարզկային տիպարանություն արտացոլել, օանի որ լավի և վատի, համելիի և տհամի, չարի և բարու չափանիշները միշտ է, տարբեր աշխարհներում տարբեր են, գակայն հատակ գույրություն ունեն: Նարեկացու և Ռուղաքի պոետիաները, որոնք առաջին հայացքից անհամեմատելի են իրենց հակագիր զաղագական-կրօնական ուղղություններու մեջ, հայոց մեջ՝ թրիտոննեական զելագիտական մտքում /Ավգուստիանոս/:

մազ Ռուղաքի Սամարդանի, Դո շանքե, 1958, էջ 117:

նակազրական և սոցիալ-պատմական օրինաշափությունների տեսակետից, այնու-  
հանդերձ, իրականում, ունեն բազմաթիվ տիպաքանական ընդհանրություններ՝  
պատմական, էսթետիկական, սոցիալական, համամարդկագին ևն։ Դրանց ընտո-  
թյունը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ 10-րդ դարում հայ քերթողա-  
կան արվեստը լիովին գտնվում էր քրիստոնեական Արքմուտքի ոճական-զաղա-  
փառական համակարգում և միանգամայն զերծ էր պարսկական ազդեցությու-  
նից։ Արքական խալֆաթի զերիշխանության ազդեցությունը, որը նպաստել  
էր ընդհանուր մերձավորակելյան քանաստեղծական ոնի ձեւավորմանը, քնավ  
չի ազդել 10-րդ դարի հայ պոեզիայի վրա։

Հի կարելի նշմարիտ զնանատել հայ և պարսից միջնադարյան քերթողա-  
կան արվեստի առանձնահատկությունները, առանց ծանաշելու և ուսումնա-  
սիրելու միստիկական պոեզիան, որը կազմում է աշխարհում հայտնի "Այօր  
Տե՛" կոչվող գրականության մի մասը։

Այդ պատմառով առաջին գլուխ երկրորդ ենթաքաժինը նվիրված է հիշյալ  
խղղին և կոչվում է , Սիստեհնջմի ԳԵՐԱՎԵՍՏԱՎԱՆ ԴՐՍՆԱՌՈՒԽ 10-18  
Դր. ՀԱՅ ԵՎ ՊԱՐՄԻՑ ՔԱՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵԼ, : Այս որոշ չափով լուսաբանում  
է միստիզմի հիմնական զաղափարը, որն իբրև կրոնափիլսոփայական աշ-  
խարհացք ունի հանգույն արմատներ և մշտապես ուղեկցել է բոլոր հա-  
մաշխարհական կրոններին՝ հարմարվելով նրանց և տարափոխվելով։ Եվ այնու-  
ամենաշնորհիկ, չնայած զաղափարաբանական դրանորման տարբեր ձևերին, միստի-  
զմի հիմնական զաղափարը՝ իրացիոնալ շփումը Աստծո հետ հոգու պայծա-  
ռացման, եքատագի միջոցով մնաց ել է անփոխի։

Ըստության է առնվում նաև հայոց և պարսից մեջ միստիզմին մեր-  
ձավոր մանակեցության ինտուրուտը իր տարբերակներով, ինչպես նաև՝  
զրանց պայմանավորվածությունը մեզ արդեն հայտնի ժողովրդական սոցիալա-  
կան շարժումների հետ։ Այս ոլորտում ի հայտ են գալիս և ծագումաբա-  
նական և տիպաքանական ընդհանրություններ, կապված Արևելքը և Արևմուտ-  
քը մերձեցնող ներպլատոնականության, գնոտափիզմի՝ աշխինքն համամարդ-  
կային ինտելեկտուալ ժառանգության հետ, որոնք ձեւավորել են հայոց և  
պարսից միստիկ քանաստեղծների պոետիկան։ Առկա են նաև ունիվերսալ պր-  
ժեների տիպաքանական ընդհանրություններ, կապված միջնադարյան մատո-  
ղի աշխարհներական և հոգեքանական կերպվածքի հետ։ Նրկու պոեզիանե-  
րում էլ քանաստեղծների համար /նարեկացի, Ռումի, Սանաւի, Բաբա Թաճեր  
ևն/ առաջնակին է խոսքը Աստծո հետ, Աստծո կերպարի ձեւավորումը որպես  
բարոյական չափանիշ, Կրան հաղորդակցվելու ծանապարհների և տեխնիկական  
միջոցների որոնում։ Այդ ամենով հանգերձ, էականորեն տարբեր են այդ  
երկու միստիզմների արտահաջորդությունները, որոնք առավելապես ակնհայտ  
են զառնում , , Ես , , -ի ձեւավորման շըշանակում։

Ճգնակեց ությունը հետևողականորեն կոնցեպցիայի քովանակություն  
է ստանում և, ինչպես ամենայն ժենումեն, ծևական ատրիբուտներ ձեռք բե-  
րում։ Դրանցից մեկը բուրծն էր /կոպիտ քրդյա հագուստ, արարեցն՝  
սուՓ՝ պատեղից՝ սուՓիզմ/ , որը մարմինը տանջելու համար էր և բարո-  
յական իզեալին /Ասածուն/ հանելու միջոցներից մեկը։

Թե քրիստոնեական և թե մահմեղական միստիկի քանաստեղծական ըմ-  
բռնումը գալիս էր Աստծո հետ մերձենալու ելակետից։ Պոեզիայում այն  
զուգորդվում էր ինքնամաքաման հետ, աղոթքի, ներբողի, զղման, ապաշ-  
խարման, ողբի միջոցով։ Հատկապես վերջինս, որ Սատանի ամենաընդգծված  
յուրահատկությունն է, առկա է նաև պարսից քանաստեղծներից ոմանց մոտ՝  
օրինակ՝ Բաբա Թաճեր Օրիանի։

Միստիցիզմում մեծ տեղ է զբանցնում ծիսականությունը, մկան միստիկի արտաքին տեսքից, վերջացրած վարթագով։ Հատկապես այն իր զե-  
րըն ուներ աղոթքների և հոգեփակիկական այլ միջոցներով էքստազային  
վիճակի հասցնելու գործում։ Տարբեր եղբայրություններ տարբեր մեթոդ-  
ներ, ծիսականություն և էթիկեա ունենան։ Սուֆիզմում շատ տարածված էր  
պարը /սամա/, որը պատմության մեջ թողել է , ,պատվոր զերվիշներ, , ա-  
ռեղծվածային պատկերացումը։ Խոսքի, պարի և երգի մեջ էքստազին նպաս-  
տում էին միապաղադ կրկնությունները, երկարածիգ տոնաւոնությունը, ինչ-  
պես նաև՝ ոիթմը։ Սուֆի շեխներից մեկի վեցայությամբ հոգեվարժության  
ժամանակ մոտ 70 հազար անգամ կրկնում էին աղոթք-քանամերից մեկը։ Նա-  
րեկացու պոեզիայում միաւար կրկնությունները, հարակրկնությունները,  
հակադրությունները, խացումները հոգեվարժության այն ձևերից եին, ո-  
րոնք գրգռում էին երեակայությունը և ավելի ու ավելի մոտեցնում էքս-  
տազային վիճակին՝ հետևաբար նաև՝ Կատարալին։

Քրիստոնեական միտիցիզմը և սուֆիզմը որպես զաղափարախոսություն  
կայանում էին քրիստոնեության և իսլամի և զրանց Սուրբ գրերի հողի  
վրա։ Հատկապես քրիստոնեության մեջ ընդգծված ասկետիզմն էր ծևավորում  
նարեկացու անսրբի զրամատիզմը, նրա պոետիկայում ողբի եղբուրթը, որը  
միստիկական սիրո ալապես կոչված տեխնիկական միջոցներից մեկն է, առև  
ոչ թե նրա կյանքի անընդմեջ ողբերգական վիճակի արգայունք։

Հոգեկան տվա լաւագությունը, սեփական անկատարության զգացումը, ինքնածաղ-  
կումը, մեղանշումը, բողոքը սակաւ, թե քրիստոնեական և թե իսլամական  
միստիկի համար ընդհանրություն են մինչև վերջնական նպատակին հասնելու պա-  
հան։ Եթե քրիստոնեական միստիկը, մեր նարեկացու նման, կատարելազործման,  
ինքնամաքաման, ինքնամանաշման, հոգեքննաման , ,կայաններում , , այնուամե-  
նայնիվ չի հասնում աստծուն, նրա հետ իր խոսքով ասած , , համաշնչապես , ,

միանալուն, ապա իսլամական միստիկը ավելի պրազմատիկ է և ամեն մի , կայանում, , բարոյական կատարելազորման մի նոր աստիճան է հաղթահարում՝ ավելի ու ավելի մոտենում նատարյալին: Ավելին, իսլամական միստիկը վերջնականապես հասնում է աստծո հետ ծուլվելու /ֆանա/ նպատակին: Վերջինս համարժեք է տարրալում մանը և անէաց մանը, որը ամենաշնորհած միստության մոնոթեիստական տեսության արտահայտությունն է: Այսպիսով, աստծո հետ մերձեցումը սուժի համար վերջանում էր հոգեպայմանության պահով, երբ կտրվում էին բռնորդ տեսակ կապերը արտաքին աշխարհի հետ, և անհատը վերածնվում էր նոր զրակով, որպես Աստված կամ՝ Առաջնային: Դա սկզբունքորեն իրացիոնալ երևություն էր և ոչ մի մանաշողական հասկացությամբ չեր միջնորդվում: Սուժիկմի պարագլուխներց մեզ՝ Հոսեին Հալաջը, Գլխատվեց, հոգեպայմանության պահին արտօսանած , , նս Աստված եմ, , /ան-ալ-Հաղի՝ ես ծշմարտությունն եմ/ արտահայտության համար, մինչեւ միստիկ նարեկացին գրում է.

Թե զոնե հոգով խառնվելով այդ մեծ հրաշակերտության հետ Զես կարող իմաստես բոլորովին կատարյալ զառնալ...<sup>3</sup>

Կարելի է ենթազրել, որ Փանակը երևութիւն հետ էր կապված պարսից սիրային պոեզիա մուտք գործած երջանիկ սիրո գաղափարը, որ մինչև 12-րդ դարը բացառություն էր կազմում:

Սուժիկմ և քրիստոնեական միստիցիզմը որոշում էին պոեզիայի բովանձկությունը, ինչպես նաև ծևակորում նրա պոետիկան, որի առաջին տառածնահատկությունը սիմվոլն էր՝ այլաբանությունը: Պարսից գրականության մեջ այն վերածվել էր մի համակարգ-կողի, որտեղ սովորական սիրային հասկացությունները բարձրանում եին վիլիտոփայական կատեգորիաների մակարդակի, առանց որի իմացության անտեղյակ ընթերցողը չէր հասկանա սիրային թվացող բանատեղծության մետահիգիկական հենքը: Հույժ կարենք համարում այդ պոեզիաներում անտրոպոցենտրիզմը, որը սակաւ տար-քեր մեկնաբանություններ էր սասանում: Սուժի միստիկը , , նս աստված եմ, , հավատամբով բարձրանում էր աստվածային ոլորտներ, քրիստոնյա միստիկը Հս-ը նսեմաց նելով հարատերեն կատարելազործվում և հոկվում էր: Երկու լեզում էլ , , նս-ը, , առաջնային է զառնում:

Երկրորդ գլուխը, որը բաղկացած է մի քանի մասերից, կոչվում է՝ , Տիրաբանան չած Ասհեներ նկ Աջոնթության Ալերսներ , , որում ըննու-

3 Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, գրաբարից թարգմ. Մ. Իերանյանը, առաջաբանը Մ. Ակրանի, Երևան, 1960, Բան ծգ դ /հնդցնում- երը մերն են Ա. Կ./:

թյան է առնվում կրոնականից զեպի աշխարհիկ ոլորտ ընթացող հայ քանատեղծությունը: , , Գեղջուկ բանիւ, , և գրաբարի մինթեզից ծպած ժողովրդական լեզուն մուտք է գործում գրականություն, զեմուկրատացնում այն: Այդ ամենով հանգերծ, պարսկական միջնադարյան գրականության համեմատությամբ հայ գրականությունը որոշակի ուշացումով մտավ աշխարհիկ սիրային թարերգության փուլ: Այզօրինակ նմուշների բացակայությունը մինչև Կոտանդին Երգնակացին մեզ կանգնեցնում է հետևյալ հարցադրումների պոչեւ:

Ի՞նչ հիմքի վրա ստեղծվեցին Կոտաննես Եղանկացու, Հովհաննես Թէկությունցու: Աիրային տաղերը, որտեղից նրանց պոեզիա ներմուծվեց արդեն պատրաստի , , սիրային ծարտասանությունը, :

Որո՞նք են արևելյան, մասնավորապես պարսկական պոեզիայի հետմաների, մտխիվների, գեղարվեստական խոսքի օգտագործման մեթոդի նույնատիպության պատմաները:

Արզյո՞ւ , , կնոջ պաշտամունքը, , , ինչպես եվրոպական, այնպես էլ հայ գրականություն մուտք է գործել արաբականից: Գուցե այդ զուգանեռները կրում են զուտ պատմա-տիպաբանական ընուշը, որոնք արդյունք են տարբեր ժողովությունների մշակությների գրազացման ստաղիալ-ժամանակագրական ընդհանրության և միանման , , հոգեբանական հատկանիշների, :

Կամկած չի հարուցում այն տեսակետը, որ Բագրատունիների և Արծրունիների արքունիքում եղած լինեին պոետներ, երաժիշտներ, նկարչներ, և որ ավտատիրական վերնախավի շրջանում, ինչպես հայտնի է, կային քոլար նախարայալները աշխարհիկ հետաքրքրությունների՝ այդ թվում սիրային թարերգության, որպես մշակության ֆեռումների, և , , կուրտուազ սիրո,, , իղեալի ստեղծման համար: Հենց աշորինակ նմուշների գրավոր գրականությունից զուրս մնալն է, որ հայ գրականության հետազոտներին հակում է 14-15-րդ դո. աշխարհիկ սիրային պոեզիայի շատ զեեր զիտել որպես ազգեցություն, առավել ևս, երբ հակականը ծևափորվում է պարսկականից մոտ երեր, շորս զար հետո: Հայ տալասացների պոեզիայում տոկա են ընդհանրական մողելներն ու ծարտասանական կաղապարները, որի շրջանակում ստեղծագործում էր միջնադարյան պոետը: Դրանց անմիջական համեմատությունը պարսից նմուշների հետ երեան է ընդում հետևյալ ընդհանրությունները:

1. Սիրո առարկան գեղեցիկ է /կրկնում է նյութական աշխարհի հատկանիշները՝ գուշ, հոտ, համ, չափ ևն/:

